Արձանագրություն N 2
Արտաքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2025/67» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հայկ Խուրշուդյան
Հանձնաժողովի անդամներ	Արմեն Նավասարդյան, Նաիրա Դանիելյան
Հանձնաժողովի քարտուղար	Արմինե Գալուստյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Հ. Խուրշուդյան)

Ընդունել ի գիտություն, որ 22.10.2025թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2025 թվականի նոյեմբերի 3, ժամը 12:00-ն:

2025 թվականի նոյեմբերի 3-ին ժամը 12:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հ/Հ	*Մասնակցի անվանում*	*Կազմակերպության հասցե, հեռախոս, էլ. հասցե*	*Կազմակերպության ՀՎՀՀ*
1	*«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ*	*Ք. Երևան, Հանրապետության 22, 5-րդ հարկ, 010 544-301, 010 544-307, 010 544-309, info@bakertillyarmenia.com*	*02586575*

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Հ. Խուրշուդյան)

Հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հայտերի կազմման և ներկայացման, փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին,

---

(Հ. Խուրշուդյան)

Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, որի մասին 18.11.2025թ մասնակիցը ծանուցվել է հետևյալ բովանդակությամբ.

Հարգելի գործընկեր, հայտնում եմ, որ գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են Ձեր կողմից ներկայացված փաստաթղթերը, որի արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- *Ձեր կողմից ներկայացված հայտով նշվել է, որ աուդիտորական գործունեությունը վերաբերվում է 2004 թվականին, սակայն կից ներկայացված պայմանագրերը վերաբերվում են 2024 թվականին,*
- *Ներկայացված տեղեկատվության մեջ չի նշվում թե ով է լինելու խմբի ղեկավարը,*

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները՝ խնդրում ենք մեկ աշխատանքային օրվա ընթացքում խնդրում եմ ուղղել ներկայացված տեղեկատվությունը և համապատասխանեցնել փաստացի կատարված պայմանագրերին, ներկայացված փաստաթղթերում հստակեցնել խմբի ղեկավարին, միաժամանակ հաշվի առնելով այն, որ հայտարարված մրցույթի չորս չափաբաժնով էլ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվել է Ձեր կազմակերպությունը, ուստի առաջարկում ենք ներկայացնել աուդիտի իրականացման խմբի հավելյալ կազմ՝ ըստ անհրաժեշտության: Շտկված հստակեցված տարբերակները պետք է ներկայացնել գնահատող հանձնաժողովի քարտուղարի հրավերում նշված՝ armine.galustyan@moh.am, էլեկտրոնային փոստի հասցեին մինչև 19.11.2025թ. ժամը 23:59-ն: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 060 80-80-03 հեռախոսահամարին՝ ներքին (1702):

18.11.2025թ.

Հանձնաժողովը որոշեց՝

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 41-րդ կետով՝ կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և ծանուցել մասնակցին՝ շտկելու արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Ընդունել ի գիտություն՝

Մասնակիցը սահմանված ժամկետում՝ 19.11.2025թ. շտկել է արձանագրված անհամապատասխանությունը:

4. Մասնակիցների առաջարկած գների մասին

(Հ. Խուրշուդյան)

Ստորև ներկայացվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկները
Գնման գին չի սահմանվել. Գնման ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա

Հ/հ	գնման առարկայի անվանումը	մասնակիցների անվանումը	մասնակիցների գնային առաջարկները		
			առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր
1	Լոռու և Տավուշի մարզերի առողջապահական կազմակերպությունների արտաքին աուդիտ	«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ	11,248,040	2,249,608	13,497,648
2	Շիրակի, Արագածոտնի և Կոտայքի մարզերի առողջապահական կազմակերպությունների արտաքին աուդիտ	«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ	19,096,562	3,819,312	22,915,874
3	Սյունիքի, Վայոց Ձորի, Գեղարքունիքի մարզերի առողջապահական կազմակերպությունների արտաքին աուդիտ	«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ	12,608,683	2,521,737	15,130,420
4	Արարատի, Արմավիրի մարզերի առողջապահական կազմակերպությունների արտաքին աուդիտ	«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ	14,366,715	2,873,343	17,240,058

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Ընտրված մասնակիցներ որոշելու մասին

(Հ. Խուրշուդյան)

25.11.2025թ.

Հանձնաժողովը որոշեց՝

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ ընտրված մասնակից ճանաչել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Հ. Խուրշուդյան)

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը՝ «ՀՀ ԱՆ ԳՀԾՁԲ-2025/67» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ չի սահմանվում:

Պայմանագիր կնքելու ծանուցում ուղարկել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ին՝ 68 784 000 ՀՀ դրամ պայմանագրային գնով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ *Հ. Խուրշուդյան*

անդամներ՝ _____ *Ա. Նավասարդյան*

_____ *Ն. Դանիելյան*

քարտուղար՝ _____ *Ա. Գալուստյան*